

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹԻՒՎԱՆԻՆ

22-րդ ՏԱՐԻ

22-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գրքով, նոյն պրոպագանդով և նոյն ուղղութեամբ: Մեր
ստանդարտը ենթ սեփական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարեկանը՝ 6 ռուբլի, ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրամյայ և Բարոնակայա փողոցների անկի-
նում):

Կայսրութեան ուրիշ թղթաբանից «ՄՇԱԿԻ» գրվում համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնէ հետեւի հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտութիւնը հայերի մէջ. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Բնագիտութեան փոքրիկ Մասնաւորութիւն. Նա-
մակ Շուշուց, Նամակ Գանձակից, Նամակ խմբա-
գրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Խաղաղական ընթերցանութիւն. Նամակ Թիւր-
քիայից, Արտաքին լուրեր. — ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵ-
ՐԱԳՐԱՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ԲԱԿԱՆ. Տառն օր Կ. Պոլսում:

ԴԵՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Ահա մի կէս դար է, որ հայերը սկսել
են իրանց երիտասարդներին տալ բարձրա-
գոյն ուսում թէ Ռուսաստանի և թէ ար-
տասահմանի բարձրագոյն դպրոցներում:
Համալսարանական ուսանողութեան ամբողջ
ոնուները մտել են կեանքի մէջ և վա-
ղուց ծերացել: Ներկայումս, անկասկած,
ուսանող երիտասարդների թիւը պակաս չէ
հինգ հարիւրից:
Սակայն հայերի մէջ մինչև այժմ չէ
նկատվում ոչ մի գիտական շարժում, չէ

կան խմբեր, որոնք նպատակ դրած լինէին
պարզել գիտականօրէն զանազան խնդիրներ:
Առանձին առանձին անհատներ, ծիշէ և,
երեւցել են մեզանում և փորձեր արել
գիտական գործունէութեան, բայց այն էլ
այնքան ասկաւ թուի, որ մինչև այժմ
հազուադէպ երեւոյթ է տեսնել գիտական
հետաքրքրութիւն ունեցող անձինք:

Մեր կովկասը տալիս է առատ նիւթ
բազմաոսկայ հետազոտութիւնների համար,
անտեսական, բնագիտական, ազգագրական,
պատմական, աշխարհագրական, լեզուագի-
տական, հնագիտական և այլն: Բայց հա-
շուկեցէթ թէ որքան մարդիկ են նուիրել իրանց
լուրջ կերպով այդ հետազոտութիւններին:
Հաստ քիչ անուններ ունենք տալու:

Ձր մուսանաք, որ յուրի և պատկա-
ռելի հետազոտութիւնների նշանաւոր մա-
սը կոտորել են ոչ կովկասցիները, — իսկ
մենք ոչ միայն ինքներս շատ քիչ գործ
ենք արել, այլ և անծանօթ ենք նոյն իսկ
ուրիշների արածին:

Նորերս անդի ունեցաւ Մասնաւորութիւնը բնա-

ծար չը կար, պէտք էր արժանանալ Նազըմ-
բէյի ցոյց առած պատկեր: Եւ Նրուսաղէմասից
կառերը տարան մեզ դէպի Սէրալի կողմը: Պոլսի
այն մասը, որտեղ գետնը լայն է Բարձր Դուռը,
սուլթանի ապարանքը, Այա-Սօֆիան, կազմում է
հին Բիզանդիոնը, որի պարսկական զեռ կան-
գուն են և ձգվում են Մարմարա ծովի ափով:
Դեռ շատ հեռուց ամենքիս ուղարկութիւնը գրա-
ւում է Ս. Սօֆիան իր աշտարակներով:

Երբ կառք կանգ առաւ, մեր առաջ և ետեւին
միայն դեմքում և ճաքճաք պատեր, աշտարակնե-
րի մի մեծ երամ թռչկոտում էր այստեղ և այնտեղ
և բարեպաշտ մուսուլմանների ու գեղանի թըր-
քուհիների ձեռքից ընդունում էր իր կուտը:
Պոլսում աղաւթները նորից շատ են, որքան չնե-
րը: Նրանց կերակրելը վարձք է համարվում,
ուստի և ամեն մեկին թիւրքի է և նրանցով: Նը-
շանաւոր Ս. Սօֆիայի այդ արտաքին անշան-
տեպը հիասթափեցրեց մեզ. մենք դեռ չէինք
տէլիք, թէ այդ արտաքին տեղը ծածկոյցի տակ
ինչպիսի հրաշալիք է բովանդակվում:

Բայց առաջ այդ հրաշալիքի պատմութիւնն ա-
նենք:

Ս. Սօֆիան բիզանդական ճարտարապետու-
թեան գլուխ գործոցն է: Յուստինիան կայսրը
այդ հիւլայական հրաշալիքը շինեց 5 տարում,
սկսելով 532 թ. և աւարտելով 537 թ.: Նրա կա-
ռուցանողը Անտէմի և Միլէտացի Իսիդոր հան-
ճարաւոր ճարտարապետներն էին, իսկ ըստ հայ-
կական աւանդութեան, ճարտարապետը հայ էր,
Տրդատ անունով: Յունական աւանդութիւնների
համեմատ, Յուստինիան բերել տուեց փոքր-Ասիա-
յից, Եփեսոսից Կիսնա շատուածուհու հին տա-
ճարից, այն, որ Հերոստրատը այրեց իր անուշը
անուանացնելու համար, ուրիշ հատ թանկագին
կանաչադոյն սիւներ, ուրիշ հատ էլ պօրթիւրեան

գէտների խնկրող ժողովը, որտեղ կար-
գացվել են մինչև 364 գեղուցումներ: Որոնե-
րէ կովկասցիների և մասնաւորապէս հա-
յերի անուններ և դուր կը գտնէր հազիւ մի
երկու անուն: Ով հետեւ է բազմում մի
քանի անգամ կրկնված նաւթային արդիւ-
նաբերութեան վերաբերեալ ժողովների դուր-
ծունէութեան — զարմանում է, տեսնելով
որ հայ ինտելլիգենտները ամենաշնչին գին
են կատարել նշանաւոր խնդիրների քննու-
թեան մէջ: Բազուի տեխնիքական ընկերու-
թեան տեղեկագիրների մէջ դուր չէր գրա-
ւում կովկասցիների հետազոտութիւններ
նաւթագործութեան վերաբերեալ, որով այս
բոլորին զբաղված է հայ ինտելլիգենտների
մի մեծ բազմութիւն:

Բերեցէթ Թիֆլիսում գոյութիւն ունե-
ցող ընկերութիւնների տարեգրութիւնները
և տեսէք թէ կովկասցիները որչափ ան-
տարբեր են վերաբերվել դէպի գիտական
խնդիրները, դէպի գիտական գործունէու-
թիւնը:

Գուցէ առարկեն, թէ մեր ինտելլիգեն-
ցիան չէ նուիրում իրան գիտական ու-
սումասիրութիւնների այն պատճառով որ
ժամանակակից հասարակական կեանքը խը-
լում է նրանից բոլոր աղատ ժամանակը
իսկ կենդանի հասարակական կեանքը պա-
հանջում է անմիջական եռանդուն գործու-
նէութիւն և ուրեմն այլ ևս միջոց չէ մը-
նում հանգիստ և հանգարտ նուիրվելու
գիտական հետազոտութիւններին:

Երանի թէ այդպէս լինելը, բայց ոչ որ
համար դադարեց չէ, որ այդ այդպէս չէ:
Մեր համալսարանական երիտասարդները
փախչում են հասարակական կեանքից և
վերջապէս գիտութիւնը պէտք է ըմբռնել
լայն մարդը: Հասարակական կեանքի ժամա-
նակակից բաղադրեալ խնդիրների բարեխղճ
ուսումնասիրութիւնը և քննութիւնը — նոյն
գիտական գործունէութիւն է:

Մեր կեանքը ինքը սկսել է մտնել այն

սիւներ Հռոմի Արեգակի տաճարից, որ կառու-
ցել էր Արեւիկանոս կայսրը. բերել տուեց նոյն-
պէս Յունաստանից և Եգիպտոսից շատ թանկա-
գին իրեր, այնպէս որ հին աշխարհի հարստու-
թիւնների մեծ մասը կենտրոնացած էր Ս. Սօ-
ֆիայի տաճարում: Արեւիկ, ոսկի, զանազան դո-
նաթիւն, բազմաթիւ մարմարեայ — այս ամենը Ս.
Սօֆիայի առանց այն էլ ունեցած վիճակն ու
մեծութեան մի նոր վայլ էին աւելացնում: Սե-
ղանի վրա մի ամպշուկների կար շինված, ամբող-
ջութեամբ ոսկուց և աղամանից:

Բայց այս տաճարը հրաշալիքաւ շինողը այդ
ոսկին և աղամանը չէին, այլ նրա սքանչելի վի-
հուկութեան և հակապական մեծութիւնը: Երեսակայե-
ցէթ մի մեծ տարածութիւն, որի վրա կառված
կար գմբէթ միանգամայն է այդ պատերը: Գմբէթի
չորսը պատուհաններով լի է. կապուտակ, ջրնշ
երկնից և նրանցով լոյսի մի ամբողջ հեղեղ
թափվում է տաճարի ներքը: Բայց գմբէթին այն-
քան բարձր է, որ կարծես իր գլխով դիպչում է
երկնակամարին. ներքեւում կանգնած, դուր ձեռք
իրեն մի ճանձ էր դրում, իսկ երբ ուրաճեւ սան-
դուղներով բարձրանում էր վերեւ, ներքեւում
գտնված մարդիկ դաժանեանք են թվում:

Պահպանվելով իր վիճակի մէջ այժման պար-
զութեան մէջ, 1356 տարեկան Ս. Սօֆիայի տա-
ճարը բաւական դաւաճել է: 440 տարի սքանչելի
առաջ նա կողպուղից և զրկվեց իր հարստու-
թիւնից, և քրիստոնէական աշխարհի պարճանք
լինելուց դադարեց, փոխվելով մահմադական մըդ-
կիթի: Ամուսնաւոր կը մնալ այդ օրը պատմու-
թեան մէջ...

Այդ պատահեց 1453 թ. մայիսի 29-ին:
Սուլթան Մահմուդ II-ը տիրել էր Բիզանդիոն-

շրջանը, որ առանց գիտական վերաբեր-
ման չէ կարող նա առաջադիմել չը
դանելով իր զարգացման ուղին հարթող
ոյժեր: Հասարակական կեանքը այժմ պա-
հանջում է աշխատութեան ու եռանդի հետ
միասին գիտնական մտածողութիւն:
Առանց գիտութիւնների յորդ հոսանքի
մեր կեանքի մէջ, առանց գիտական վե-
րաբերմունքի դէպի երկիրը և նրա արդիւ-
նաբերութիւնը — մենք դատապարտված կը
լինենք երկարատեւ անշարժութեան:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՆԱԳԵՏՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Յունւարի 11-ին փակվեց բնագէտների խնկրող
ժողովը, մի ամբողջ շաբաթ ամենաեռանդուն գոր-
ծունէութիւնից յետոյ: Ժողովը բաղձնարար էր,
բաղկացած 2170 հոգուց: Ժողովը ունեցաւ երեք
ընդհանուր ժողովներ, որոնցից մէկը բազման օրը,
միւսը շաբաթվայ միջին, երրորդը փակման օրը:
Այդ երեք ժողովներում կարգապահեցին տասն գիտ-
նական գեղացւումներ և մի քանի պաշտօնական
գիտութիւններ ժողովին վերաբերեալ:

Ժողովը, ինչպէս յայտնի է, բաղկացած էր
տասն և մէկ բաժնից, որոնցից իւրաքանչիւրն ունէր
իր առանձին նիստերը: Բոլոր 11 բաժնիներում
կարգապահ էին 364 գեղուցումներ: Բացի այդ, մի
քանի բաժնիների հետ միասին ունեցել են խառն
նիստեր Մասնաւորութիւնի ունեցող գիտա-
կան հիմնարկութիւնները, ինչպէս են գիւղատնտե-
սական, իրաւագիտական, աշխարհագրական և բնա-
գիտական ընկերութիւնները:

Ժողովը, փակվելուց առաջ, վճեց և մի քանի
կարեւոր խնդիրներ. նա որոշեց խնդրել կառավարու-
թիւնից. 1. բանալ կանանց բարձրագոյն բժշկական
կուրսերը. 2. մտցնել առողջապահութեան դասա-
ւանդութիւնը բարձրագոյն արհեստագիտական

նիւն. քրիստոնեաները, իբրև վերջին ապաստա-
րան, ապաստանեցին Ս. Սօֆիայի մէջ և ջերմ ա-
ղօթեցին անուր: Աստուած չը լսեց այդ աղօթ-
քը. փողերը և գէնքերը շատաչիւր գուժեցին, որ
թշնամվին, քրիստոնէութեան անխնայ թշնամին,
մոտենում է. տաճարի դռները կայքիների հա-
լուածի տակ ընկան և ետիջրեցին վայրենի հրո-
սակները ներս խոռոչներ: Կոտորելով, շարեւերով և
սրի անցկացնելով ամենքին: Տաճարի ճիւղութիւնը,
փարթաւութիւնը շրջաբեր էր նրանց, սկսվեց մի
զղուկի սրբապղծութիւն. արիւնը, մարդկային
արիւնը, լճի նման լեղապսած կանգնել էր տաճարի
մէջ: Դիակները կուտակվել էին և գոռոց յաղթա-
կան սուլթան Մահմուդ՝ ձի վրա նստած, կոխու-
տելով այդ դիակները՝ մտաւ տաճարը:

Բայց մոտ. թէ չէ, շանհաճարի պէս կանգ ա-
ռաւ, շանաւոր տաճարի գեղեցկութիւնից. իշու-
ձիուց, երկրպագեց և իսկոյն սկսվեց աղօթք. կայ-
սերական աթոռի վրա բազմեց ինքն սուլթանը,
իսկ պատրիարքի գահին վրա նստեց մուֆտին և
այդ օրից պատարագի ու աւետարանի փոխա-
րէն, Ս. Սօֆիայի կամարները թնդում են Ղուրա-
նի և «Լա իլլահ իլ Ալլահ»-ի ձայններով:

Նախագաւթում, շարեւորութիւնը պահապա-
նը առաջադիմեց մեզ հաջնել լայն հողաթափին
մեր կոշիկների վրայից, ամեն ոչ-մահմադական
պարտաւոր է այդ հողաթափները հաջնել, որպէս
զի նրա անմարդկային ուղեքը չը պղծեն մահմադ-
կան տաճարի սրբութիւնը. տարակոյս չը կայ, որ
մահմադականները աղաւ են այդ առանձնաշնոր-
հից... Եւ այդ շնորհի համար պէտք է պահապանի
վարձատրել առատ, գէթ 10 զրուշ բաղնիշով:

Հաջնելով հողաթափները՝ մի չէլին առաջնոր-
դութեամբ մտնում էր տաճարը: Գուր ապշած,
հիացած էր մտնում ձեր աչքերին երեցած տեսարա-
նի հոյակապութեան առաջ: Որքան որ տաճարի

դպրոցներում. 3, մոցնել բոլոր կայսրութեան մէջ թերթիկները վրա ծնունդները արձանագրութեան ձեռք ժողովը ցանկութիւն յայտնեց, որ Ռուսաստանի զանազան տեղերում բացվին տեղական ընկերութիւններ՝ երկիրը և մարդը ուսումնասիրելու նպատակով:

Նախկին ութերորդ ժողովում մի հարց էր առաջարկված—թէ որչափ ժամանակակից է և նպատակայարմար ուսումնական բոլոր գիտականների մէջ կապ հաստատելու առանձին մեծ ցնկերակցութեան միջոցով՝ գիտութիւնը զարգացնելու նպատակով: Կարգադրել մասնագիտովը մշակել էր մի ծրագիր և առաջարկել այս տարվայ ժողովին, որ վճռեց յանձնել մասնագիտովին նորից քննութեան ենթարկել ծրագիրը, ժողովը շատ անձանց կարծիքներ և վերջնականապէս խմբագրելով՝ գիտել միջնորդութեան հաստատութեան համար:

Դժբաղդաբար, ժողովը ձայների բազմութեամբ որոշել է չը տպագրել ժողովում արած գնկուցումները, աչքի առաջ ունենալով այն հանգամանքները, որ գնկուցանողները շատերը իրանց գիտական վաստակները հրատարակում են ուրիշ հանդէսներում, այնպէս որ այլ ևս հրապարակելը զենու ժողովի հաշիւները:

Ընդհանուր համաձայնութեամբ որոշվեց հետեւեալ տարեկան ժողովը նշանակել կիսով քաղաքում երկու տարուց յետոյ, 1896 թվ. յունվարին:

Ժողովին մասնակցողները մեծ համակրութեամբ էին վերաբերում դէպի ուսումնական գիտութեան աստիճանը, վարձատրելով նրանց համակրական ցոյցերով և ծախսարարութիւններով:

ՆԱՄԱԿ ԶՈՒՆՈՒՅ

Թունվարի 13-ին

Այս յունվարի 13-ին առաջնորդարանում տեղի ունեցաւ Վարդապետ թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնը, նախագահութեամբ առաջնորդ Կարապետ Խախտուպետ Այվազեանի: Ներկայ էին 40 պատգամաւորներէ 35: Վազանցեցող եկեղեցու ընտրութեան մասնակցել են 67 ընտրող, Ազգութեան—60 ընտրող, Մեղրեցոյց—115 և վերին թաղը—67: Կը նշանակէ, եթէ հաշուենք minimum 15,000 հայ բնակիչ Շուշում, հոգաբարձական ընտրութեան մասնակցել են այդ թվից միայն 309 ընտրող, ուրեմն մօտաւորապէս 20%:

Առաւօտեան 11 ժամին սրբազան նախագահը բացեց ժողովը մի համառօտ ճառով՝ առաջարկե-

լով առանց «կրքի» և «սրտնեղութիւնների» կատարել ընտրութիւնը: Որոշվեց ընտրութիւն կատարել հետեւեալ ձևով. նախ՝ թերթիկներ բաժանել, որոնց մէջ պատգամաւորները պիտի նշանակեն 12 անուններ և ապա ձայներ հաւաքելուց յետոյ, մինչև 10 ձայն ստացողներից իւրաքանչիւրին քուէտուժի դնել:

Այստեղ ևս, ընտրութեան հէնց սկզբում, մի անտեղի և անիրաւուն հարց յարուցվեց, նոյն հարցը, որ երկուսը զբաղեցրեց Մեղրեցոյց եկեղեցու ընտրութեան ժամանակ. —արեւոյ իրաւունք ունէ՞ն նրանք, որոնք չուշեցի չը լինելով ընտրվել են պատգամաւոր, մասնակցելու այս ընտրութեան: Առաջին խօսողը և այդ հարցը բարձրացնողը եղաւ նախկին հոգաբարձու պ. Ա. Խաչատրեանը, որը երկուս և անհամ խօսակցութիւնով, բոլորովին անտեղի, ընտրութեան չը վերաբերեալ զրուցաբանութեամբ՝ ժողովի համբերութիւնն իսպառ ի չարը գործ դրեց:

Սրբազան նախագահը կանոնադրութեան յօդ. 5 կարգում է, որով յայտնվում է թէ Շուշու հայ հասարակութիւնն է ընտրում, անխափար, թեմական դպրոցի հոգաբարձուներին: Մի քանի պատգամաւորներ բացատրում են այդ աւելի երկար: Հարցը քուէարկութեան դրվեց. ժողովականները ամենքը հաւանութիւն տուցին այդ մտքին, բայց յիշեալ հոգաբարձուն իր 2—3 ընկերներով Այվազեան ընտրաբարձուն այդ բանով էլ չը բաւականանալով՝ յայտնեց հրապարակով, թէ ինքը չէ ցանկանում մասնակցել ընտրութեան, որովհետեւ իր թէ կանոնադրութեան դէմ է գործվում, և հետագայ ժողովից:

Ընտրաբարձուի փախուստից յետոյ ժողովը շարունակեց իր զբաղմունքները: Պատգամաւորներից մէկը—պ. Ստեփան Խաչատրեան—առաջարկեց ժողովին կանխապէս խորհրդակցել, թէ ում աւելի յարմար և արժանաւոր կը համարէր ժողովը հոգաբարձական պաշտօնի համար: Ժողովը հաւանութիւն տալով, որքազան նախագահի բացակայութեամբ, մի քանի բազմ խորհրդակցեց, սակայն առանց որ և է հետեանքի, որովհետեւ շատը գտել են անյարմար այդ ժողովում յայտնել, թէ ում աւելի արժանաւոր է և այլն: Իրաւ որ այդ աւելի նախապատրաստողական մի ժողովի գործ էր, քան այդ օրվայ անմիջական ընտրութեան պարագայում:

Այվազեան քուէարկութիւն, որի հետեանքը արդէն «Մշակում» հարկողված է:

Ընտրութիւնն ընդհանրապէս աջող կարելի է համարել: Սրբազան նախագահը օրհնելով նորըն-

տիր հոգաբարձուներին՝ փակեց ժողովը գիշերվայ ժամը 3-ին:

Գ. Վարաջ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Թունվարի 10-ին

Ձեզ արդէն հաղորդված է այստեղ աղջիկ փախուցնելու մասին: Ահա էլի մի քանի մանրամասնութիւններ:

Ամսիս 8-ին, երեկոյեան 9 ժամին, օրիորդի մայրը տեսնում է իրանց պատշգամբի վրա կանգնած մի քանի գինեւորված մարդիկ: Նրա հարցին՝ «Ի՞նչ էք», բռնում են մօրը և ասում. «տուր օրիորդին, աւել ոչինչ չունենք»: Օրիորդը, որ այն ժամանակ լինում է սենեակում, իսկոյն դուռը կոշկում է: Փախուցնողները մտնելով կօրիւրքօրը և տեսնելով որ դուռը կոշկած է, բանալու հնար չը կայ, կտարում են, օրիորդին փախցնում, նրա հօրեղբորը վերաւորում, երբ նա օգնութիւն է դալիս, բարեբաղդաբար վէճը մահացուցիչ չէ: Լուրը իսկոյն տարածվում է. հաւաքվում են օրիորդի ազգականները և բարեկամները, յայտնում ոստիկանութեանը (թէ և գործօվայ միշտ կանգնած է այդ դէպքը պատահած տեղից մի քանի տաճէ ներքեւ, իսկ պրիստավը մի քանի սաճէ վերեւ) և հետամուտ են լինում չարազործներին բռնելու: Հաջիւ հաջ մերձակայ թուրք գիւղում գտնելով, միւս երեկոյին, օրիորդին վերադարձնում են տուն: Չարազործներից միայն երկու թուրքի և Աւետիքին են բռնում, մընացածները անհետանում են: Գործը արված է քննիչին: Քննիչը բերել է ուղարկել փախցնող արդարեւ, իր եղբորը և երկու թուրքին: Մնացած մասնակցողները, կտապանել են այն գործօվայը, որ կանգնած է եղել բլրի մօտը, որի մօտով են տարել օրիորդին, ապա տես:

Հասարակութիւնը տեսնելով, որ կան ազգեցութիւն ունեցող մարդիկ, որոնք աշխատում են այս գործը ընթացիկ, դիմեցին պ. նախագահային, լընդրելով խիստ ուշադրութիւն դարձնել այդ գործի վերաբար, բացատրելով թէ այդ վարմունքը կարող է մեղաւորութիւն դառնալ, եթէ այս անգամ յանցաւորները չը պատժվեն ըստ արժանաւորի և հարկ եղած ուշադրութիւն չը դարձնել: Այդ բոլոր պատճառաբանութիւնները լսելուց յետոյ պ. նախագահը խոստացել է անել ինչ հարկաւոր է, աւելելով, որ այդ դէպքը կը լինի առաջին և վերջինը:

Չարմանալ է, որ մի քանի մարդիկ ամեն միջոց գործ դնելով, ուղում են տղային պաշտպա-

նել և աշխատում են հաշտեցնելով պատկել տալ, իրար զիրք ունեցող պաշտօնեաներին համոզել, որ այդ բանը օրիորդի կանգնել է եղած, և ծածկել տալ շատ տեղ երեկոյին, որոնք զեւ ևս վարագոյրի ետեւ թաքնված են մնացել և այլն:

Թէ և հետաքրքիր է վարագոյրը բաց անել և գործող անձերին ծանօթացնել, բայց... սպասենք քննութեան վարձանին:

Գանձակցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Բազու, յունվարի 5-ին

«Մշակի» անցեալ տարվայ № 14-ի մէջ՝ տպագրված էր Ֆ. Մարգարեանի «Բազուի հայոց Աղքատաւորները ընկերութիւնը» վերնագրով յօդուածը: Լիարդս ենք, որ չէք զանաջ տեղ շնորհելու և մեր այս պատասխանին:

Յօդուածագիրը ասում է. նախ՝ թէ հին հոգաբարձուները զեւ հաշիւ չեն տուել նորերին, այնպէս որ յայտնի չէ, ունի Աղքատաւորը զբաղաւ կամ անշարժ կալուածք, թէ ոչ: Կրտսն կը պատասխանէ. եթէ թեմական առաջնորդը հրամայէ հին հոգաբարձուներին հաշիւ տալ նորերին, այն ժամանակ նորերը կը ստանան կլոր պարագ, որ հին հոգաբարձուները ծախսել են անհրաժեշտ հարկաւորութիւնների վրա իրանց գրպանից:

Երկրորդ՝ թէ նոր հոգաբարձուները որոշել են Աղքատաւորը անկեանց—օրբանցի վերածել—Այդ ընկերութիւնը երկար տարիներ է, որ իր թէ առատ նուէրներով և թէ բարի խորհուրդներով պահպանելու բերել, հասցրել է այն անկեան, որ այսօր նրանց կոպէկները արդիւնքով մօտ 30 թշուառ ընտանիք ապրում են Աղքատաւորի ձրի սենեակներում: հարցնում ենք՝ ինչպէս է համարձակվում Աղքատաւորին թշուառ մի մարդ այդպիսի մեծ փոփոխութիւն անելու ինքնապէս՝ առանց յիշեալ ընկերութեան կամքն ու հաճութիւնը ստանալու...

Երրորդ՝ թէ նոր հոգաբարձութիւնը քննեց, տեսնու, որ Աղքատաւորները ընկերութիւնը՝ այդ ու կլին, աղաներ ու աղջիկներ մեծ մասամբ ընդունակ աշխատելու և նոյն իսկ արհեստավորներ, խառնված մի ասն մէջ, մինչև անգամ մի բնակարանում աշխատում են: Ինչու և այնպիսի պարագային փաշտածի հետ, թափառաշրջվել արհեստավորի հետ, որի անմիջապէս հետեանքն է մշտական կուրսեր իրար մէջ, անբաւականու-

րը ամբողջ դարերի ընթացքում աշխատել են չնչն ըրիտօնեական տաճարի հետքը, որպէս զի ոչ մի բան չը յիշեցնէ Բիւզանդիայի ժամանակի Սօֆիան, որքան որ նորը գեղարուեստական մօզայիկի վրայից նրանք թանձր գոյն են քսել, աւերել են պատկերները, կողոպտել են բոլոր հարստութիւնից, այնպէս որ այժմ մերկ պատերն են կանգնած և մի քանի մեծ ջահեր են կախ ընկած, բայց ինչ որ մնացել է, այն էլ բաւական է մի գաղափար տալու Ս. Սօֆիայի գեղեցկութեան մասին: Ծառ պարզ երևում է առաջ սեղանի տեղը. երևում են և սեղանի վրայի եղած փրկչի և կամարի հրեշտակապետների պատկերները, որովհետեւ տաճարական կողմից ներկարարի վրձինը չէ կարողացել խանգարել. տեղ տեղ թողված են պատերի վրա քանդակված խաչերը: Գմբէթի վրա գտնված քրիստոնէական պատկերները, երեւի 12 առաքելների պատկերները, անհետացնելու նպատակով տաճիկները կտրել են տուել նրանց վրա ահալին կլորակ վահաններ սե ֆօնով, որոնց վրա ոսկէ տառերով գրված են Մահմէդի, Օմարի, Աբուբքրի, Օմարի, Ալու և Հասան, Հուսէյնի անունները: Մի հրաշքով բոլորովին անվթար մնացել է. Հոգոյն Սրբոյ և Աւետարանի նկարը տաճարի գլխաւոր մուտքի գլխին:

Ծանր և ճանդ տպաւորութիւն է գործում տաճարն իր ամպլուստով. կարծէք դարեւոր ընի մէջ է ընկղմվել նա մասնատակներին միակերպ աղօթքների օրօրի տակ: Գուլիս ամիսն էր, ամեն նաւաբ ժամանակը և սակայն այդ կամարների տակ միտելու չափ դով էր: Չանազան անկիւններում գորգերը փռած պատկած են տաճիկ շէնքերը և խմաները. մի քանիսը կարգում են դուրան, ուրիշները տխուր երգում են իբրեւ բուեր: Պատմում են, որ առաջ պահպանները քանդում են եղել և պոկում պատերից մօզայիկի կտորներ և ծախում:

Եւրօպացիներին՝ շլանալով առատ բախշիւցի, բայց այժմ սուլթանի հրամանով խտիւ արգելված է, իսկ մօզայիկի ամեն մի փոքր կտորը եւրօպացիները, մանաւանդ յայտնել, ոսկու քաշով առնում են եղել:

Դրանց տաճարը բոլորովին խանգարված է կողմնակի շինութիւններով, որոնք տաճկաց ժամանակի գործ են, մասնաւոր չորս միւսարէները:

Այլուեղից գնացելու բիւզանդական հնութիւնների միւղծօնը, որ կառուցված է ներկայ սուլթանի օրով և որտեղ փոքր-Ալիայի զանազան կողմերից ժողովել են Գուլիստանի հնութիւնները: Նրա սկզբնապատճառը եղել է արլիւղծ Համդի-պէ, եւրօպական կրթութիւն ստացած մի տաճիկ ուսումնական: 12 տարի է, ինչ բացվել է այդ միւղծօնը և նա արդէն անուն է հանել Եւրօպայում, որովհետեւ այդտեղ կան շատ թանկագին արձաններ, յունական աշխարհի քանդակագործութեան գեղեցիկ օրինակներ: Այդտեղ կան յունական Արամազդի, Ապօստի, Մարսի, Անահիտի, Հերքուէսի, Մէլուզանի, ինչպէս և հրեւոյնական կայսրերի՝ Ներոնի, Կալիգուլայի, Տրայանոսի, Տիտոսի արձանները: Միւղծօնի երկրորդ բաժինը պարունակում է իր մէջ զանազան դամբարաններ կամ sarcophages (սարկոֆագ)ներ, որոնց մէջ նշանաւոր է մի վերին աստիճանի գեղեցիկ մարմարեայ դամբարան, որի վրա քանդակագործված են Գարեհի և Աղէքսանդրի պատերազմի զանազան տեսարանները. դա համարվում է Մեծն-Աղէքսանդրի դամբարանը և եթէ միայն հաստատվի գիտնականների այդ կարծիքը, նա մի անգլին հնութիւն կը լինի: Կամբարանը իր ամբողջութեամբ պահված է առանց որ և է աւերման ենթարկվելու հարկաւոր դարերի ընթացքում: Նոյն բաժնում դաստարակված են և փիւնիկեան, Ներքովի նշանագրերը, բնեագրեր և պարսից Կլարոս, Կարեհ, Կամբիզ թագաւոր-

ների իսկական հրովարտականքը փոքր հողատախտակների ձևով: Աշխատանքը Համդի-բէկ կարողացել է մի այդպիսի կարճ ժամանակում այդքան հարստութիւն հաւաքել փոքր-Ալիայի զանազան կողմերում պեղումների կատարել տալով: Այդ միւղծօնը մեծ ապագայ է խոստանում: Այդ միւղծօնից յետ խօսել ենիւլէրներին միւղծօնի մասին չարժէ. նա իսկապէս և միւղծօն չէ, այլ մի երկու երկար և նեղ կեղտոտ սենեակներ, որտեղ ի ցոյց են դրված ենիւլէրների զանազան պաշտօնեաների մոմից շինած պատկերները իրանց հազարատու և տարազով ու պատմի գործիքներով:

Միւղծօնից քիչ հեռու գտնվում է բիւզանդական ս. Իրինայի հին տաճարը, որ այժմ փոխված է զինանոցի. այդ այն տաճարն է, որտեղ կայացաւ երկրորդ տիւրքերական (Կ. Պոլսի) ժողովը: Այժմ այդտեղ պահպանվում են հին զէնքեր և օսմանեան կայսրութեան բերելի բանալիները:

Ասում են, որ այդտեղ են պահվում և ս. Սօֆիայի զանգակը և այն շղթան, որով բիւզանդական կայսրութեան և ճննաւայնների օրով կապում էին Բօսֆորի նեղուցը:

Ս. Իրինայի տաճարի մօտ գտնվում է Աբրալը, որ սուլթանների հին պալատն է և որտեղ այժմ գետեղված է Բարձր Դուռը իր զանազան զիւսններով: Աբրալը շատ մեծ տարածութիւն է բռնում. նրա շրջակայքը մօտ 6 վերստ է և այդ է նախկին Բիւզանդիայի բուն տեղը: Այդտեղ է գտնվում և Մեծն-Թէոդօսի սիւնը, որ նա կանգնեց ի յիշատակ Գօթերի նուաճման:

Այս-Սօֆիայից յետոյ հաշակաւոր է Սուլթան Ահմէդի մեկիթը, որը թէ և շինված է Այս-Սօֆիայի հետ միջակա համար, բայց ի հարկէ, իր նպատակին չէ հասնում: Նշանված է շատ ձոխ և փարթամ: Նա աւելի հաշակաւոր է և նրան այցելում են ճանապարհորդները նրա առաջ գտնված

հրապարակի պատճառով. այդ ընդարձակ հրապարակը հին հիպոդրօմն է, որտեղ տեղի էին ունենում յունական խաղերը և ըմբռնարարութիւնները: Երբ յիշում էք, որ այդտեղ կլուծվում էին Գուլիստանի ժամանակ կանաչաները և Կիպոտաները, երբ յիշում էք, որ վանդալների նուաճող յաղթական վէլիպարը այստեղ փառաբանվում էր ժողովրդից, երբ յիշում էք, որ այդ հրապարակը պատմական նշանաւոր անցքերի հանդիսատես է եղել, տխրութիւնը պատում է ձեզ: Եւ ինչ է մնացել այդ բոլորից, միայն Մեծն Կոստանդինոսի հին աղլուս սիւնը, այլ ևս իր մետաղեայ տախտակներից զրկված: Մի ուշադրութեան արժանի հնութիւն է մնացել սակայն. հին Գուլիստանի Կիլիկեան տաճարում, այն որ պատգամներ էր յայտնում, մի սլոն կար, որ բազկացած էր երեք միմեանց փաթկալված պղնձ օձերից. այդ օձերի վրա դրված էր Կիլիկեան յայտնի եռատանին: Այդ եռատանին Մեծն-Կոստանդինոսի բերեց Կ. Պոլսի և դրվեց հիպոդրօմում. այժմ այդ սիւնը կայ, թէ և սուլթան Մահմադ գլխատել է օձերին:

Դրանով վերջացնենք մեր պոյուրը: Պէտք է ասել սակայն, որ չը նայելով Նազըմ-բէկի արած պատուին, նրա տուած առաջնորդ—ոստիկանին, ամեն տեղ պէտք էր դարձնալ բախշիւներ տալ զանապաններին: Տուն վերադառնալիս, Աշոտ վարդապետը յայտնեց, որ քաղաքու վարութիւնը պահանջում է ոստիկանին ևս բախշիւ տալ գէթ ամենաքիչը 2 օսմանեան ոսկի (20 բ.)։ Կարելի էր ոստիկանին 2 ոսկի տալուց յետոյ, պատրիարքարանի զաւաղին ևս չը տալ. քաղաքավարութիւնը պահանջում էր մի ոսկի էլ նրան տալ...

Հ. Առաքելեան

թիւներ և ամենազգուշացողներ ընտրուած լինելու համար... Սակայն զարգացող ժամանակներ և զարգացող ժողովուրդ ամեն մի ընտանիք ունի անհնաճիկ անհնաճ իր վառարանովը՝ թէ տունը տաքացնելու և թէ կերակուր պատրաստելու համար։ Եւ ամենին չը կայ այնտեղ մի ընտանիք, որ անբարոյական լինի։ Յանկացողը կարող է գնալ և ստուգել։

Կառնանք այժմ բուն եղելովեանը։ Այս տարվայ գարնան վերջերս լուծմ ենք, որ Աղբառախնամ ընկերութեան համար նոր հողաբարձուներ են ընտրվել, մէկն էլ Նիկոլէ Ժան, Գեղա-մանցն է։ Մենք մեզ թող չենք տալիս հաւան-ընծայելու։ Ինչ ինքնասիրութեան տէր կը լինի նա, որ նախ հրապարակով յայտնէ՝ թէ Աղբա-տանցին հակառակ էմ և այլն, և ապա մի և նոյն այդ Աղբառանցին վրա կառավարիչ կարգ-վել համաձայնվի... Արդեօք հաշտվել է նա ճշ-մարտութեան հետ և կամենում է՝ ծառայելով այդ հիմնարկութեանը, քաւել նրա դէմ իր գոր-ծած յանցանքները։ Մտածելով այս տեսակ՝ դա-լիս ենք այն եղականութեան, որ նա երբեք չէ կարող հաշտվել ճշմարտութեան հետ։ Եւ շատ չէ անցնում, եղիչէ քահանան, մի կիրակի օր եկեղե-ցում քարոզում է... Նա նոր հողաբարձութեան նա-խագահ էմ։ Աղբառանցում ապրող աղքատներին լաւ ծանօթ էմ. այլ ևս ոչ մատուղ, ոչ հաց, ոչ ալիւր, ոչ բրինձ, ոչ փող, ոչ հագուստ և ոչ մի բան չը տանէք Աղբառանց, մեղք է... ուրիշ մի քանի անէծք ու նորովի էլ այսուհետեւ մատուղ տանողները հասցէին... Յետոյ էլ լուծմ ենք, որ Նիկոլէ քահանան անձամբ գնացել է Աղբառանց և նրա մէջ բնակվող աղքատներին ասել է. պէտք է Աղբառանցից դուրս գաք, մինչև նոյնների վերջը ձեզ ժամանակ եթէ ձեր գլխու դուրս չը գաք, — պօլիցիայով դուրս բերել կը տամ ձեզ... Մեծ տրուած է յայտնում ժողովուրդը այդ բու-րով, մանաւանդ այդ անխիղճ կարգադրութեան դէմ, որի տխուր հետեւը հանում է և առաջնորդ-ընն, որը իսկոյն հրամանագրում է Նիկոլէ քահա-նայ Գեղամանցին՝ չը համարձակվել աղքատնե-րին դուրս անելու։ Աղբառանցից։ Տէր-Նիկոլէն, զայրացած թէ ժողովուրդը տրուած չի և թէ թեմա-կալի գլխութեանը՝ բարձրանում է դարձեալ մի կիրակի օր սեղան և, փոխանակ ս. Աւետարանի փրկարար խօսքերը քարոզելու, ասում է. «Ես դուր տեղը չեմ Աղբառանցից դուրս անում աղ-քատներին, ասա պատճառը...» այնտեղ բնակվող-ները «անտուկ են», «անբարոյական են» և այլն և այլն։ Ասեմք տէր-Նիկոլէն, իր խոստման համա-ձայն՝ ուզում է Աղբառանցը զանգել. բայց ինչ խղճմանք է, որ այդ չար նպատակին կատա-րում տալու համար, ամբողջ 30 տուն աղքատ ընտանիքներին «անառակ», «անբարոյական» է անուանում...

Սակայն ով է այս տէր-Նիկոլէն և ինչ յա-րաբերութիւն ունի նա Աղբառանցի հողա-բարձութեան հետ։ Ինչ իրաւունքով է նա համարձակվում ազգին երկար տարիներ ծա-ռայած և ծառայող մի հիմնարկութեան հիմքը փորելու... Այսպէս թէ այնպէս՝ թող լաւ իմա-ցած լինի տէր-հայրը, որ Աղբառանցի շինու-թիւնը այնպիսի ամուր քարերից է կառուցած՝ որ ցեցերն ու զրպարտութիւնները, նոյն իսկ ուժգին քամիները չեն կարող նրա հիմքը շարժել... Հողաբարձութեան հանձնապահ՝ Գրիգոր Գլխարկանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՍԻՐ

Հարկաւոր ենք համարում յայտարարել, որ նոր բաժանուրդ գրվողները (Մշակը) կը ստանան մի-այն 6-րդ համարից սկսած, որովհետեւ դրանից ա-ռաջ եղած համարները արդէն սպառվելցին։

Խորհուրդ ենք տալիս մեր խաւարաւոր աւան-դապաններին կարգաւ «Вестникъ Европы» ամ-սագրի 1893 թվի զեկտեմբերի համարում տըղ-ված մի փոքրիկ բայց հրաշալի յօդուածը, որ կրում է «Недоумѣніе» վերնագիրը, և խօսում է այն մասին, թէ «ինչ է հայրենասիրութիւնը»։ Յօդուածագիրը ճշմարիտ է նկատում, որ խաւա-րաւորների «հայրենասիրութիւնը» միայն կարող է թշուառացնել և կործանել հայրենիքը, բայց բարդաւորեցնել երբեք։

Պետերբուրգի, լրագիրները հաղորդում են, որ վճռված է Նովոբուխովսկի համալսարանում բժշ-կական ֆակուլտետ բանալ։

Էլի մի նոր գառանցանք, և այս անգամ «Харьковскія Губернскія Вѣдомости» լրագրում։ Խարկովի լրագիրը իր № 324-ի մէջ տպագրել է անմիտ, երեխայական հայտանք հայերի՝ դէմ Այդ անսանձ հայտանքներին մի գեղեցիկ յո-ղուածով պատասխանել է ուսանող Ա. Խաութ-սեան, Պետերբուրգի «Русская Жизнь» լրագրի յունվարի 15-ի համարում։ Մի քանի տեղեր և մենք ա-զատվենք մի խումբ բամբաստողներից, որոնք իրանց համար արհեստ են շինել սանձարձակ յանդգնու-թեամբ ցնկ չարտել մի ամբողջ ազգի երեսին։

Մայրաքաղաքի լրագիրներում հետեւեալ հեռա-գիրն է տպված Թիֆլիսից. «Պետական կայուած-ների միջնարկութեան պաշտօնականը սկսեցին մանրամասն հետազոտել կովկասեան ձկնառատ գետերը և լճերը, որպէս զի անուրդով մասնաւոր անձանց արվին և շահ ստացվին դրանցից։ Ա-ռանձին ուշադրութիւն է դարձրած Գեօկչայի լճի վրա, որը հարուստ է գեղաբուսի ձկներով»։

Յօդուած Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստա-ցանք. 1) Աղստաֆայից, Ստեփան Սողոմոնեանից՝ 5 թ. 2) Ղլարից, Հայրապետ Սիմէօնեանից՝ 3 թ. 3) Մերվից, Կոստանդին Մարտիրոսեա-նից՝ 8 թ. (մնաց. բաժ.) 4) Գանձակից, Մկրտիչ Ավետիսեանից՝ 18 թ. (8 թ. մնաց. բաժ.) 5) Աղովից, Արգար Աղիբեանից՝ 1 թ. 6) Շա-խուրդ, տիկին Մարգարիտ Լազարեանից, հան-գանակած, 3 թ. 7) Նիկոլայից, Գրիգոր Յարութիւնեանի միջոցով, 8 անձից հանգանա-կած, — 8 թ. 8) Ուրբան Նախկին 1833 թ. 9) 16 կոպէկի հետ այժմ ունենք 1884 թ. 16 կոպէկ։

Կովկասի կառավարչապետը, «Нов. Время» լրագրի խօսքերով, առաջադրութիւն արաւ կով-կասեան քաղաքների տնտեսական պայմանները բարոյաբերու մասին։

«Արձագանքը» մեղադրում է «Новое Обозрѣніе» լրագրին, թէ ինչու նա չը թարգմանեց իր յո-ղուածը, ինչպէս այդ արեցին (?) «Кавказъ» և «Тифлисскій Листокъ» լրագիրները, և դրա հետ միասին արձակում է մի քանի սլոգաններ ուսու-րանող հասցէին։ Բայց ի՞նչու։ «Արձագանքը» խորհրդարանում, որ սովորութիւն ունի ինքն իր յօդուածները թարգմանել և այստեղ ու այնտեղ ու-ղարկել, եթէ մի թարգմանութիւն էլ ուղարկէր «Ho-вое Обозрѣніе» լրագրին, գուցէ նա էլ տպա-գրէր... Հասկանում էք, թէ ինչ ենք ասում. այն-պէս չէ։

«Судебная Газета» լրագիրը հաղորդում է եր-դուածի հաւատարմատարներին դատի կերպարա-նափոխութեան նախաձեռն մանրամասնութիւն-ները։ Մտադրութիւն կայ երդուածի հաւա-տարմատարների խորհուրդները, որոնք այժմ զոյգութիւն ունեն միայն Պետերբուրգի և Մոսկ-վայի դատաստանական պալատներին կից, հիմ-նել բոլոր դատաստանական պալատներին չընա-նկերում։ Նախագիծը որոշակ տակսա է մտցնում գործը վարելու համար։ Լրագիրը հաղորդում է, որ այդ նախագիծն արդէն առաջարկված է պե-տական խորհրդի քննութեանը։

Մեզ հաղորդում են, որ Հրատարակչական ըն-կերութեան պարահանդէսից զուտ արդիւնք մնա-ցել է 800 թուրքի։

«Правит. Вѣстникъ» լրագրում յայտարարված է, որ խորհրան վերջացել է Թիֆլիսի, Բագուի, Բեսարաբիայի, Վիլնի, Կիւվի, Մոգիլնի և մի քանի այլ նահանգներում։

Գանձակիցի պ. Մկրտիչ Մանեան նուիրել է «Մշակին» այս տարվայ մի օրինակ՝ Գանձակում եղած հայոց գրադարանին, որ հիմնել է Նիկոլէ խաւարեանը։

Տիֆլիսում, «Нов. Время» լրագրի խօսքերով, Պետերբուրգից հեռագիր է ստացվել, որ կառա-վարութիւնը վերջնականապէս որոշել է տալ 300,000 ռ. Նովոբուխովսկի այստեղի քարածուխի հանքերը մշակելու համար։

«Русск. Жизнь» լրագրում կարդում ենք. «Կովկասի կառավարչապետը, որպէս մենք լսե-

ցինք, անհրաժեշտ համարեց ձեռնարկել քաղա-քային սահմանները որոշելուն՝ նրանց համար նոր յատակագծեր կազմելու և հաստատելու։ Նոյնպէս անհրաժեշտ համարեց քաղաքային անտեսութեան շատ մանրամասն քննութիւն կատարել ամեն կողմից՝ քաղաքներին պատկանող տեղերը և ե-կամուսները ձեռք որոշելու նպատակով։ Վերջ տալ ամեն տեսակ հողային վէճերին և միջոցներ գտնել քաղաքային ընթացիկ եկամուտները մե-ծացնելու համար։ Բացի դրանից, անհրաժեշտ է համարվում, որպէս մենք լսեցինք, աւելի պարզ քաղաքային կանոնադրութիւն մտցնել կովկասեան քաղաքներում։

Ռուսաց սինդիկ և ներքին գործերի մինիստ-րութեան օտար դաւանութիւնների ղեկավարա-մէնտի մէջ գրադրութիւն է սկսվել, որպէս զի թող արվել քրիստոնեայ դաւանութիւնների հոգե-ւոր վարչութեան անձանց երկաթուղիներով ձրի երթևեկել իրանց ծովների սահմաններում՝ այն ղեկավարում, երբ հոգեւորական անձինք գնում են հիւանդների մօտ կրօնական օրինակատարութեան համար։

ԱՍՍԱՅԻՍԱՅԻՑ մեզ գրում են. «Այսօր, յունվարի 15-ին, Վենափառ Կաթողիկոսի անուանակոչու-թեան օրը լինելով՝ տեղիս ս. Փրկիչ եկեղեցում քահանաների դասը մաղթանք կատարեց, որին ներկայ էին երկուսու ուսումնարանների աշակեր-տութիւններն ու աշակերտները ուսուցչական խմբով, հողաբարձուները և խուռն բազմութիւն։ Մաղ-թանքից յետոյ հողահանգիստ կատարվեց և ու-սումնարանների բազմաթիւ բարերար Կարապետ Կաթողիկոսի գերեզմանի վրա»։

ԱՍՍԱՅԻՍԱՅԻՑ անդադար գնալուսներ ենք ստա-նում այնտեղի քահանաների մեծամասնութեան ղեմէ։ «Ներքին» անտանկի արարքները բաւական չեն, գրում է մեր թիվարկիցը, դու տգէտ, ա-նուս մի խումբ էլ համարձակվում է յոյս ունե-նայ քահանայ ձեռնադրվելու։ Ինչի վրա է հիմն-ված նրանց յոյսը»։

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Հրապարակել ե-րեկոյան տեղիս տնտեսի Գալուր Աղուսեանը, աշակցութեամբ հողաբարձութեան Թորոս Բոյեակաչեա-նի, ժողովարարութիւն արեց յօդուած տեղացի մի քանի աղքատ ընտանիքների. ժողովից մօտ 250 թուրքի, որով հէնց հետեւալ օրը գնեցին ցորեն ու բամբակեցին աղքատ ընտանիքներին։ Շնորհա-կալութեան արժանի են թէ այդ անձինք, և թէ Աշտարակի հասարակութիւնը, որը չը զրացաւ օգնութիւն հասցնել իր քաղցած անդամներին»։

ՆՈՒՐԱՍԱՅԻՑ մեզ հաղորդում են. «Քանի գնում է աղքատութիւնը և սովը մեղանում մեծ ծաւալ է ընդունում։ Քաղաքիս շուկայում և հարուստների տան բակերում ամեն մի քայլափո-խում պատահում էք չընկալալ գիւղերից եկած աղքատներին և մուրաքցիաներին, միմիայն Ղլաղ և Նորադուզ գիւղերից աղքատներ չեն երևում։ Տեղիս երկրատարութիւնը մտադիր է քան հողուց բաղկացած մի խումբ կազմել, որ զոյգ զոյգ մանգան բոլոր աները և մի քանի օրում ստատիստիկական տեղեկութիւն հաւաքեն թէ մարդկանց և թէ անասունների համար եղած պա-շարի մասին, որպէս զի ձեռք որոշվի, թէ ինչքան կարիք ունի քաղաքը դրանց ցորեն գնելու»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԿԱՅԻՆ ՐԷՖՈՐՄՆԵՐԸ

Կրիստի մինիստրութիւնը վերջնականապէս վճռ-եւ է պատգամաւորների ժողովից լրագրութիւն-ներ պահանջել՝ արմատական վերանորոգութիւն-ներ մտցնելու համար խոսքիստում։ Հէնց որ պատ-գամաւորների ժողովը իր համաձայնութիւնը կը տալ, այդ վերանորոգութիւնները անյապաղ կի-րադրվին թագաւորական հրամանով։

Այդ վերանորոգութիւնների պրոգրաման իր մանրամասնութիւններով դեռ ևս յայտնի չէ, բայց այն, ինչ որ մամուլը կարողացել է իմանալ, շատ զարմանալի և տարօրինակ է թվում, որովհետեւ, որ-պէս լրագիրներն ասում են, ծախսերի կրճատումն Կրիստի սկսել է ուսումնարանական գործից։ Մի-նիստր-հախափառ մտադիր է փակել մի քանի գիւնդական դպրոցներ, պակասեցնել բարձրա-

գոյն գիւղատնտեսական դպրոցների թիւը և կա-ռավարչական նպաստ այլ ևս չը տալ գե-ղարուեստական և արհեստաւորաց դպրոցներին։ Միւս վերանորոգութիւններից պէտք է մասնացոյց անել կառավարչական պաշտօնականների թիւի պա-կասեցնելու վրա ընդհանրապէս։ Մինիստրութեան հաշուի, բոլոր այդ ՐԷՖՈՐՄՆԵՐԸ կը տան մօտ 23 միլիոն խնայողութիւն։ Բացի դրանից լրա-գիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ պակասեցնել դեպքանների ուսմանը։

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, 12 յունվարի
Շարաթ օր Կ. Պօլսոյ մէջ տարածուեցաւ լուր մը, որ մեծ ցաւ պատճառեց։ Մեր վա-ճառականներէն Կիւլպէնկեան հաճի Յովհաննէս քանի մը օրուան մէջ թիֆլոյէն մեռաւ։ Այս մահը մեծ կսկիծ պատճառեց, այդ երկրասարդը ազ-գային գործերու շրջանակին մէջ թէ խեղացի, թէ անկեղծ և թէ սրտով աշխատող էր։ Կովկա-սեան հայերուն շատ լաւ ծանօթ է. 1892-ին Տաճկաստանի հայոց ներկայացուցիչներէն էր կա-թողիկոսական ընտրութեան համար, սպառնալից վտանգ կար անոնց համար որք Հայրիկի պիտի տային իրենց քուէն։ Կիւլպէնկեան Յովհաննէս չէր խորհմանական էր, իրեն պարտականութիւն սեպեց վազել երթալ Ս. Էջմիածին և հոն ի գործ դնել հարուստ վաճառականի իր բոլոր ազգեցու-թիւնը թիւրքոյ հայոց բոլոր եկեղեցականներուն և աշխարհականներուն վրա Հայրիկի համար։ Իր վերադարձին շատերնին սրղմեցինք. ձեռքերը ու շնորհակալութիւնէ աւելի բան մը յայտնեցինք իրեն—երախտագիտութիւնիս, վասն զի գիտէինք թէ իր ազգային պարտականութիւնը առանց մեծ վտանգի չէր որ կատարած էր։

Կիւլպէնկեաններու անունը 79—80 թ. մեծ սովէն ի վեր է, որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ մեր մէջ։ Հայաստանի սովեաներու Կեդրոնական Յանձնաժողովին նախագահ հանդուցեալ Սերովլէ Կիւլպէնկեան, որուն անունը անբաժանելի կցուած է այդ մեծ թուականին, մեծ վասն զի զարթման թուականը եղաւ։ Այդ սովը ամբողջ հայութեան սիրտը ու միտքը դարձուց դէպի Հայաստան որ տեսաւ թէ չէ մոռացուած։

Յովհաննէս Կիւլպէնկեան առեւտրական մեծ տան մը գլուխ էր, պատիւ մըն էր հայոց վաճառակա-նութեան։ Ազգային գործերու համար մեծ յոյսեր դրած էինք իր վրա։

Խիզախ, յանդուգն և—ինչ որ հազուադէպ է տեսնել թիւրքոյ հայոց մէջ—ամուր նկարագրի (caractère) տէր էր։ Իր կեանքին քանի մը գիծեր կրնան ցոյց տալ թէ ինչ բնաւորութեան տէր էր։

Գիշեր մը կը գտնուի հարսանիքի մը տուն Գաւրգեղ, ուր ներկայ էր նաև Աշգեան խորէն պատրիարք. զարմանքով կը տեսնէ որ քանի մը ծանօթ անձնաւորութիւններ երբ ներս կը մտնեն, հայոց պատրիարքը ողբի կիւլէ զանոնք. մեծարե-լու համար, ինչ որ շատ տարօրինակ երևումը մըն էր, մասնաւորապէս անոր համար որ պատրիարքը անտեղի խտրութիւններով կը վիրաւորէր զանոնք, որոնց կը զլանար յարգանքի այդ անպատահ նը-շանք. այս վիրաւորութիւններուն մէջ էր և Կիւլ-պէնկեան Յովհաննէս։

Ոչ ոք սակայն կը համարձակի դիտողութիւն մը ընել պատրիարքին։ Քիչ մը վերջը Տ. Աշգ-եան կըսէ Կիւլպէնկի թէ յաջորդ օրը իր տուն ալ այցելութեան պիտի երթայ—է՛հ, եկեր ևս, չես եկեր մի և նոյն բանն է, կը պատասխանէ Կիւլպէկ, ու կը սկսի բացատրել թէ իր ընթացքը, ըրած խորականութիւնը որ աստիճան անվայել են հայոց պատրիարքին։ Ինչու չը կայ ձայն մըն ալ որ յիշեցնէ պատրիարքին թէ իր ընթացքը որչափ աղետաբեր եղած է ու կրնայ ըլլալ, եթէ շարունա-կէ մնալ ուխտադրուած։

Արդեօք ժողովրդի մը խորին արհամարհանքն զայս մը չէ։ Միտնողի օրը մեծ խրատ մը տուեցաւ։ Աշգեան պատրիարքին։

Յունուարի 7-ին, Միտնողի երկրորդ օրը, եկած էր պատրիարքարան, որ իր ժողովրդին շնորհաւո-րութիւնները ընդունի. բայց պատրիարքարան կուգան յունաց պատրիարքի ներկայացուցիչներ, ուրիշ օտարականներ, պատրիարքարանի պաշ-տօնականները, ու մեր պատրիարքարանի պաշտօ-նական մարմիններու ներկայացուցիչները, շատ քիչ թուով։ Իսկ ազգէն ոչ ոք։

Բայց կը տեսնեմ թէ խնդրեալ չեղեցայ, և շա-րունակութիւնը որ մեր բարեբերութիւն ինչ ինչ հե-

տաքերական կենտրոն վրայ կրնայ դադարաբեր
մը տալ, կրնայ երկար ըլլալ, ուստի կը թողնուի
յաջորդ նամակին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Պէշտուտ» լուր է պատում, որ այնտեղ շուտով
մինիստրական ճգնաժամ է լինելու: Որպէս յայտ-
նի է, վերջին ժամանակներս մինիստրական ա-
զատամիտ կուսակցութիւնից հեռացան մօտ 20
անդամներ, որոնք չէին համակրում կառավարու-
թեան եկեղեցական-քաղաքական նախագծերին:
Այդ ի նկատի ունենալով, մինիստր-նախագահ
Վ.Կերիլէ իբր թէ առաջարկել է կայսրին ամբողջ
մինիստրութեան հրաժարականը, բայց կայսրը
մերժել է այդ առաջարկութիւնը:

«Times» լրագիրը հետաքրքիր տեղեկութիւն-
ներ է տալի ցորենի գին ընկնելու մասին: Անգ-
լիայում և այլ է համարում Մեծ-Բրիտանիայի
գիւղատնտեսութեան ծանր ճգնաժամի գլխաւոր
պատճառներէ մէկը:

Վիլհելմ կայսրի հաշտութիւնը իշխան Բիւ-
մարիի հետ օրվա չարքի է գերմանական մամու-
լի համար: Գերմանական իր լրագիրը ասում է, որ
այդ անցքը չէ կարող լուրջ գործնական հետե-
ւանքներ ունենալ, որովհետեւ իշխան Բիւմարիի
առողջութիւնը չէ թոյլ տալիս նրան մտածել նորից
ծառայութիւն սկսելու մասին: Կայսրի բարեկամա-
կան վերաբերմունքը դէպի հիւանդ և դաւաճող
կանցքներ քաղաքական շարժառիթների վրա չէ
հիմնված: Կայսրը կամենում է հաշտվել իշխան
Բիւմարիի հետ վերջինի մահից առաջ:

Իշխանագիւղի մէջ, Լիբիւնէլտ, սօցիալիստների
կողմից հարցապնդում արաւ անգործ միացած բան-
ւորների դրութեան և նորերս Բեռլինում տեղի
ունեցած անկարգութիւնների մասին: Լիբիւնէլտ
ասում էր, որ բանւորների թշուառ դրութիւնը
օրից օր վատանում է, որովհետեւ գործը գնալով
պակասում է: Մի և նոյն ժամանակ նա մեղադ-
րում էր պոլիցիային, որ այդ վերջինը ինքն էր աշ-
խատում անկարգութիւնների առաջացման: Ներ-
քին գործերի մինիստրը, պատասխանելով Լիբ-
իւնէլտին, հերքում էր Բեռլինի պոլիցիայի վրա
բարդած մեղադրանքները:

Լրագիրների ասելով, խառնաշառ մոզովորդն
արդէն սկսել է ինտելիգենտ կասսաներից հանել
իր պահեստի դրած գումարները, և դա շատ վատ
նշան է: Նշանակում է, որ ժողովուրդը արդէն չէ
հաւատում թէ գանձարանը կարող կը լինի իր
պարտքերը վճարել: Խառնաշառ կատարելա մասն-
կութեան դուռն է հասել և Վիեննայի ու Բեռլինի
քաղաքագետները պէտք է լուրջ կերպով մտա-
ծեն նրա փրկութեան մասին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի ցուցահանգէս 1900 թ.ին:
1900 թ.ին Պարիզում ցուցահանգէս կազմող մաս-
նաժողովը շատ մեծ դժուարութիւնների հանդի-
պեց: Գծարարութիւնները ներկայացնում են 1889
թ.ի ցուցահանգէսից մնացած մի քանի շինու-
թիւնների քաղաքը: «30 մետր ունեցող գալլէ-
րէա» անուանված շինութիւնը, «Արուստաների
պալատը» և այլ մի քանի շինութիւնների քան-
դիւր դժուար չէ, բայց ինչ վերաբերում է Մեքե-
նների գալլէրէա շինութեանը, այդ վերջինի
քանդակը մեծ դժուարութիւն է ներկայացնում:
Այդ գալլէրէան, որը ներկայացնում է մի հոյա-
կապ մետաղական շինութիւն, նստել է մօտ եօթ
միլիոն: Այդ շինութեան մասերի քանդակը և նո-
րից պէտք ամէլը այնքան դժուար է, որ երբ
մասնաժողովը, կամենալով ազատվել վերջին ցու-
ցահանգէսից մնացած այդ յիշատակից, դիմեց
գանապան ընկերութիւններին՝ առաջարկելով գնել
այդ շինութիւնը, նա ամեն տեղից մերժում ստա-
ցաւ: Վերջապէս երկաթուղիական մի ընկերու-
թիւն՝ կամենալով մի կայարան կառուցանել,
համաձայնվեց մեքենաների գալլէրէան ձրի վերց-
նել, որովհետեւ նրանք գինը հազիւ թէ կը հաւա-
սարով քանդակը գնին: Երբեք նա աշտարա-
կըն ևս մեծ դժուարութիւններ կը ներկայաց-
նի: Նա նստել է 7,457,000 ֆրանկ: Դրա քանդակը
4 միլիոնից է ժամ չի նստի: Մի խօսքով մասնա-
ժողովի ծախսերը ցուցահանգէսի տեղի համար կը
հասնեն 10—11 միլիոնի:

Չառամնալ Կոչուար ստիպված եղաւ ծախել իր
գրադարանը, որ նա կազմել է իր ամբողջ կեան-
քի ընթացքում: Հէնց որ յայտնի եղաւ Բուդա-
պէստում, թէ նա կամենում է ծախել իր գրա-
դարանը, անպակաս մասնաժողով կազմեց այդ
գրադարանը գնելու ազգային թանգարանի համար:

Երեւում է, որ ունդարական դաւաճող ազգասեր
ներկայումս նրկական շատ նեղ վիճակի մէջ
է, որ համաձայնվեց իր հարուստ գրադարանը ծա-
խել 1,600 ֆլորինով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 18 յունվարի: Թագաւոր Կայսրի
տաքութիւնը 37 է, պուլը լաւ է, թղթի բոլորգ-
ման նշանները նկատելի չեն, բրոնխալը պակա-
սում է, քունը լաւ է, մի փոքր անորթակ երեւց,
թուլութիւնը սկսում է պակասել:

ՊԱՐԻՑ, 19 յունվարի: Լօկրուա հարցապնդում
արաւ պատգամաւորներ ժողովում նաւատորմի դրու-
թեան մասին: Լօկրուա հարցնում է, թէ ինչի վրա
էին ծախվում արված գումարները: Ֆրանսիան
նաւատորմի վրա աւելի փող ծախեց, քան թէ
երեքպետեան դաշնակցութիւնը, իսկ ծովային ու-
ժերը՝ նաւերի թւի, նրանց արագընթացութեան և
դիմաւորութեան կողմից ստոր են դաշնակցութեան
նաւերից, ամեն բանում անկարգութիւն է նկատ-
վում: Լօկրուա գանգատում է, որ Ֆրանսիայի
ափերը պաշտպանված չեն թշնամիներից, նաւա-
հանգիստները բաւարար կերպով պաշտպանված
չեն, զբաղակիւնների մեծ մասը ծովը մտնել չէ կա-
րող: Նաւատորմի նիւթերի վատ դրութեան և դա-
տարկ զինարանի պատճառով: Պարլամենտը քննու-
թիւն պէտք է կատարի:

ԲԵԼԳԻԱ, 19 յունվարի: Ազատամիտ մինիստր-
ները չնորոգելով իրեն յայտնեցին թագաւորին
իրանց ներուժն չնորոգելու համար: Թագաւորը յայտ-
նեց, որ կատարելապէս յոյս ունի ազատամիտնե-
րի վրա: Արմատական լրագիրները լի են թշնա-
մական յարձակումներով Միլանի վրա, և բացար-
ձակ յայտնում են, որ յեղափոխութեան նպատակն
է շեղել Սերբիան աւանդական քաղաքականութիւ-
նից: Ի նկատի առնելով Միլանի դրութիւնը, որը
հրաժարվել է սերբիական քաղաքացու իրաւունքնե-
րից, գաղափարը չէ վստահանում խմբագիրներին
պատասխանատուութեան հրաւիրել:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 20 յունվարի: Թագաւոր Կայսրի
տաքութիւնը 37,1 է, պուլը լաւ է, բրոնխալը
չարուանում է պակասել, քունը և ինքնազգացու-
մը աւելի լաւ է: Բիւլլեթենները կը դուրս գան
միայն օրը մի անգամ:

ԼՕՆԻՐՈՆ, 20 յունվարի: «Pall Mall Gasette»
լրագիրը հաղորդում է, որ Գլադստօն վճռել է
հրաժարական ապր: Լրագրի խօսքերով, Գլադ-
ստօն այդ վճիւրը կը հաւաքուի թագաւորին մինչև
պարլամենտական նստաշրջանի բացումը: Այդպիսի
վճիւր բացատրում են նրանով, որ Գլադստօն դա-
ւաճում հասակ ունի և վշտացած է, որ իրան-
դական բիւլլե մերժվեց: Լօրը Բոլդերբի, որին դի-
մեցին հարցունքներով, պատասխանեց, որ իրան
ոչինչ յայտնի չէ Գլադստօնի այդ դիտաւորութեան
մասին:

ՀԱՄԲՈՒՐԳ, 20 յունվարի: Ֆլիքէ-ադիւտանտ
Կոմս Մօլտեյն այսօր առաւօտեան ճանապարհ ըն-
կաւ դէպի Ֆրիդրիխսբուրգ, որպէս զի յանձնի իշ-
խան Բիւմարիին կայսրի կողմից նրան խոստացված
դիմաւորական մոնարքայն վերաբերում:

ԼՕՆԻՐՈՆ, 20 յունվարի: Բիւրրիցից ուղարկ-
ված հեռագրով Գլադստօն վճռողապէս հերքում
է իր հրաժարականի մասին տարածված լուրերը:

ՀՈՒՍ, 20 յունվարի: Փաստաբան Մօլմարի
անարկիստը, որը մեղադրվում է յանցաւորների
ընկերակցութեանը պատկանելու համար և ներքին
պատերազմ առաջացնելու նպատակով արած
գործունեւորի համար, դատապարտված է 23 տար-
վայ բանտարկութեան: Նա առաջին երեք տարին
պէտք է միայնակեաց բանտարկութեան ենթարկվի:

Խաղաղի՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԶԱՐ ՀՐԵՇՏԱԿ
Գրքերը, կեանքի գծեր, Գինն է 6 կօպ.
Վաճառ. հետեւեալ գրաւաճառ. Թիֆլիս,
Զաքարիայ Գրիգորեանցի մօտ. Ալէքսանդ-
րօպօլ Սանտիանցի մօտ, Բազու. Կասպի դը-
րաւաճառանոցում:

Մ. Մ. ՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աշխատութիւն ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՍՍ ՍԵՐԳԵՅԵԱՆԻ:

Գինն է 1 ռուբլի: Ծախվում է Թիֆլիսում Կենտրոնական գրաւաճառանոցում, և Յով-
հաննէս Տէր-Սարգսեանցի մագաղինում: Դիօրցօվայա փողոցի վրա, Բագու. «Արօր»
տպարանում:

(№ 6)

2—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ

Ութերորդ գիրքը: Գրքի գինն է 50 կօպ., վաճառվում է «Կենտրոնական գրաւաճառ-
անոցում» և մեզ մօտ:

Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի ճասնէրօրդ գիրքը: Ձեռնհաս
անձանց խնդրում ենք ուղարկել մեզ հետեւեալ նիւթերը.— Հեքիաթներ, Ժող. երգեր,
Առաճներ, Հանելուկներ, Արագախօսութիւններ, Անէճքներ, Օրհնութիւններ, Երբեմնեք,
Աղօթքներ, Փաղաքաշական խօսքեր, Մանկական խաղեր, Ժողովրդական բառեր, Ոճեր,
Կարճուածներ, և այլն: Այդ աւանդութիւնները պէտք է գրել բուն տեղական բար-
բառով:

Մեր հասցէն՝ Тифлисъ, Городская Управа. Տիֆլիսի Նաւասարդեանց:

(№ 6)

2—3

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեծ պահանջը և ահազին հոշակը ՄԵՐ ՀՆԱՐԱՄ՝

ԾԱՂԱՅԻՆ ՕՂԵԿՈՆԵՐ,

ԳԼԽԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՈՒՆ ԵՎԱՐՆԵՐՈՎ,

ԳԼԽԵՐԻՆԵԱՆ ՓՈՇՈՒ

ԼԿՍՏԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԱՍՄԻԿԻ ԵՒ ՐԵՋԵԴԱՅԻ ԾԱՂԱԿՆԵՐՑ,

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿԴԻԿԻ ԵՒ ԱՅԼՆ

ստիպում է մեզ հետ մրցողներին ՆԱԽԱԶՅՆԵԼ ոչ միայն անունները, բայց և մեր
մասնագիտութիւնների արտաքին տեղը, որպէս զի դրանով մարդիկն են հասա-
րակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը, ահա
այդ պատճառով խնդրում ենք պատուելի գնողներին մեր ար-
դիւնքները գնելու ժամանակ լուրջ ուշադրութիւն դարձնել Ֆիլ-
մայի և գործարանային մարկայի վրա:



(№ 8) 1, 15 1—8

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Նշեմքերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱՍ ԲՐՈԽՍԱՅԻ ԲՈԺՈԺԻ
ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԵ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում
իր յատկութիւններով և տուած առաւ բերքով: Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի
«Էփօմիլեան» Ֆիլմայից: Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՅԱԿԱՆԻՔԱՆ-
ՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագուում, Նուխում, Աղա-Մուսա Մահմէդօվին,
Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.

(ե. շ.)

17—32

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍ ԵՒ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԳԵՂԵՐԻ, մարթին ԳԵՂԵՂԿԱՅՆՈՎ և հօտաւեա, նոյնպէս և ստող-
ջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կովկասում, Վարձուցովի
արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:

(№ 67)

59—100 (ե. շ.)

ՆԵՐԿԵՐ
ՄԱՋԻ ՀԱՄԱՐ
Վ. ԳԵՆԻ
Վիեննայում

Իրիւնց պատրաստած: Անգլիա ԳԵՂԵՐ
են մազն ու մօրուքը կարճ միջոցում
սեւ, շէկ և բաց ու մուգ շագանակա-
գոյն ներկելու համար: Մի արուակի
գինը ճանապարհի ծախսով 3 ռուբլի է:

Վ. ԱՌԻՐԻՒ
ՊԵՏԵՐԲՈՒԳՈՒՄ
Կօշիկօնայա 18.
(№ 8. ամս. 20) 1—8

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ
Կանանց, և չափահաս օրիորդներին, սո-
վորեցնել ամենակարճ միջոցում կանանց
հագուստների, կօրսեաների, և սպիտակե-
ղէնների ձեւել ու կարել, օրինակելի ձեւով,
որը յարգված է ամեն տեղ, և որով կարե-
լի է ստանալ առեւտրաւ: Գինը՝ Միլիոն-
նեւաճիւն: № 53, օրիորդ ԳԵՅԱՐԻՔԱ-
ՆԵԱՆՅԻՆ: (№ 27) 3—3

Վ. ՓԱՓԱՋԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՐԻՔԱՀԱՅՈՅ ԿԵԱՆԻՔԻՑ
Հրատարակութիւն ԱՐԵԼ ԱՊՐԵՍԵԱՆԻ
Գինն է 1 ռ. 25 կ., ճան. ծախսով 1 ռ. 50 կ.
վաճառվում է բացառապէս Բ. Քամիլեանի
գրաւաճառանոցում, Գօթիկիսի պրօսպեկտ,
Թիֆլիսի ժողովարանի տակ:
(№ 26) 4—5

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագորնայա փողոց, № 9)

Ցանկացողը, ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը ա-
ւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել Կուրսերի հիմնո-
ղին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական
կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հրաբարձուի հաստատված ծրագրի
համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Մօլմանով-
ների բանկային գրասենեակում և Կուրսերի հիմնող ընակարանում: Օտարաքաղաքացի
դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88

7—20